

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՌԱՄՅԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
(2013_2016 թթ.)

Կազմել է համայնքի ղեկավար՝

Մ.Համբարձումյան

Հաստատվել է համայնքի ավագանու << 19>> փետրվար 2013թ. թիվ 01-Ա որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի իրավիճակի գնահատում.
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական խնդիրները.
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում.
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում.
5. Համայնքի քառամյա զարգացման ծրագրի հիմնական ցուցանիշները.
6. Հավելված 1.
7. Հավելված 2

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 Աշխարհագրական դիրքը, կլիման

Անտառամուտ գյուղը /1948թ.՝ Քոլագիրան/ գտնվում է Գուգարքի տարածաշրջանում՝ Բազումի լեռնաշղթայի, Վահագնիի լեռնաբազուկի և Փոցխասարի միջև: Մարզկենտրոնից 28 կմ հյուսիս-արևելք: Գյուղը տեղադրված է ծովի մակարդակից 1300մ բարձրության վրա: Ունի աղբյուրներ որոնք օգտագործվում են որպես խմելու ջուր: Կլիման բարեխառն լեռնային է, տևական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Տարեկան թափվում են 600-700 մմ մթնոլորտային տեղումներ: Հունվարին միջին ջերմաստիճանը -8.2 է, հուլիսին +27:

1.2 Ժողովրդագրություն

Գյուղում ապրում են 348 բնակիչներ, որոնցից տղամարդիկ կազմում են 55 %:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. երեխաներ մինչև 6 տարեկան՝ 24

2. դպրոցականներ 6-16 տարեկան՝ 66

3. 16-ից բարձր՝ 132

4. հաշմանդամներ՝ 2

5. ընտանիքների թիվը՝ 160

6. գրանցված <<Փարոս>> ընտանեկան նպաստների համակարգում՝

7. Գրանցված ընտրողների թիվը՝ 269 մարդ

1.3 Տեղական ինքնակառավարման մարմիններ

Համայնքը ղեկավարում է համայնքի ղեկավար, որը ընտրվում է չորս տարն մեկ անգամ:

Համայնքի ղեկավարը կազմել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար - 1 դրույք

աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ - 1 դրույք

հավաքարար-0.5 դրույք:

Աշխատակազմի ամբողջ ապարատը բաղկացաց է 4 հոգուց: Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը բերված է հավելված թիվ 1-ում:

Համայնքի ավագանին կազմված է 5 անդամից, որոնք ընտրվում են չորս տարին մեկ անգամ:

1.4 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1977թ.-ի թիվ 51 որոշմամբ և բերված է հավելված թիվ 2-ում:

Տնտեսության անկաման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել է: Խմելու ջրի ներհամայնքային համակարգը կառուցվել է 1964 թվականին: 2005 թվականին կատարվել է վերանորոգման աշխատանքներ: 2012 թվականին ավատվել է նոր ջրամբարի կառուցումը:

Վերանորոգման կարիք ունի ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհները:

Անմխիթար վիճակում է գտնվում ակումբի շենքը: Այն կառուցվել է 1946 թվականին և ոչ մի անգամ չի վերանորոգվել:

1.5 Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն

Կենցաղային աղբի կուտակման համար համայնքում չկա առանձնացված տարածք:

Համայնքում չի գործում աղբահանության կենտրոնացված համակարգ, ուստի տնային տնտեսությունների կողմից անհատական կերպով կատարվող աղբահանություն հետևանքով աղտոտված են համայնքի վարչական սահմաններում գտնվող թաղամասերի մոտակա ձորերի շրջակայքը:

Ոռոգման ցանցի անմխիթար վիճակի հետևանքով դժվարանում է գյուղատնտեսության զբաղվողների աշխատանքը: Մելավատարների բացակայության պատճառով թեք լանջերի վրա գտնվող 30 հա հողատարածք գտնվում են էռոզիայի և հողատարության վտանգի տակ:

1.6 Բնակարանային տնտեսություն

Համայնքում կա 113 առանձնատուն 11032 քմ տարածքով: Բնակարանի կարիք ունեցող ընտանիքների թիվը կազմում է 8:

1.7 Գյուղատնտեսություն

Գյուղտնտեսական չունենալու պատճառով համայնքը դժվարանում է կազմակերպել գյուղմթերքների առատությունը: Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են կարտոֆիլի, ճակնդեղի, դդումի և այլ բանջարաբուստանային կուլտուրաների արտադրությամբ, որը խիստ զգայուն է շրջակա միջավայրի նկատմամբ և մեծապես կախված բնության քմահաճույքից: Անձրևային տարիներին որոշ չափով կարելի է բերք հավաքել, իսկ երաշտի տարիներին գյուղացին կորցնում է բերքի 70-80 %:

1.8 Հողատարածքների օգտագործում

- Համայնքի վարչական տարածք - 549 հա
- Վարելահող 132 հա
- Խոտհարք 70 հա
- Արոտավայրեր 220 հա
- Անօգտագործելի հողեր 46 հա
- Ձորեր 10 հա
- Դաշտային ճանապարհներ 16.31 հա
- Արտադրական մաս 6.6 հա
- Տնամերձ հողեր 34 հա
- Դպրոց 0.299 հա
- Հուշարձան 0.30 հա
- Գյուղամիջյան փողոցներ 6.33 հա
- Սեփականաշնորհված հողեր 195 հա
- Մեկ հողամասի չափը 1.1 հա
- Պետական պահուստային հողեր 14 հա
- Համայնքի սեփականության հողեր 331 հա

1.9 Կրթություն

Համայնքն ունի մեկ հիմնական դպրոց՝ 510 քմ մակերեսով : Դպրոցում սովորում է 32 աշակերտ: Դպրոցն ունի 13 աշխատատեղ, մեկ ուսուցչին ընկնում է 4 աշակերտ:

1.10 Էներգիամատակարարում

Համայնքի տարածքում առկա է 1 տրանսֆորմատորային ենթակայան՝ 180 ԿՎՏ ընդհանուր հզորությամբ : Համայնքը զագաֆիկացվաց է, զագամատակարարման ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 3.3 կմ, տեղակայված է 1 զագաբաշխիչ կայան:

1.11 Մշակույթ, սպորտ, հոգևոր դաստիարակություն

Համայնքն ունի ակումբի շենք, որը վթարային է: Մա էլ պատճառ է հանդիսացել, որ բնակչությունը զրկվել է հասարակական միջոցառումներից: Համայնքը չունի մարզահրապարակ, որի պատճառով երիտասարդությունը զրկված է սպորտային խաղերից:

Համայնքի շրջակայքում կան հին բերդի մնացորդներ: Ունի կիսավեր եկեղեցի, հարավային եզրին Անտառամուտ գետակի աջափնյա բլրակի վրա գտնվում է «Թուխ մանուկ» գերեզմանոցը, որտեղ առկա են անմշակ գերեզմանաքարեր:

1.12 Առողջապահություն

Համայնքում գործում է մեկ բուժկետ: Այն տնակային շինություն է, կառուցվել է 1988 թվականին՝ երկրաշարժից հետո: Ունի մեկ աշխատող՝ բուժկետի վարիչ:

1.13 Քաղաքաշինություն և ճարտարապետություն

Համայնքում կան պատմամշակութային հուշարձաններ: Համայնքի հյուսիսային եզրին է գտնվում 19-րդ դարի Սբ. Աստվածածին եկեղեցին: Ուղղանկյուն հատակագծով, կիսաշրջան խորանաով կառույց է: Ունի բարձր բեմ, մկրտարանի խորշ: Կառուցված է տարբեր չափի և գույնի կոպտասառ թարերով: Համայնքի կենտրոնում տեղադրված է Հուշաղբույր Երկորդ Աշխարհամարտում զոհվածներին, որը կառուցվել է 1968 թ.: Իրենից ներկայացնում է խուլ կամարով, ճակտոնով ձևավորված ուղղանկյուն ծավալ, կառուցված է բազալտի սրբատաշ քարով, կենտրոնական հատվածում փակցված մարմարե հուշատախտակի վրա փորագրված են զոհված 64 համազյուղացիների անունները:

Զբոսաշրջությանը կնպաստի գյուղի տարածքում գտնվող գեղեցիկ բնապատկերով և բնության փոքրիկ հրաշալիքներով հարուստ վայրեր: Ամենավառ օրինակը «Թռչկան» կոչվող վայրն է՝ բնական ջրվեժ: Մասնագետների համոզմամբ այն հանդիսանում է բնական մերսման աղբույր:

1.14 Համայնքի ուժեղ կողմերը

- Գյուղից 0.5 կմ վերև կա քարածխի հանք, որի քարածուխը նախկինում օգտագործվել է ֆրանսիացիների կողմից: Վերջին հետազոտությունները կատարվել են 2000թ-ին արտասահմանյան կազմակերպությունների կողմից: Կատարվել են մեծ ծավալով աշխատանքներ, բացվել են հանքախորշեր, փորձարկվել է հումքը, սակայն ֆինանսական պատճառով չի շահագործվել:
- Մեծ աշխատուժի առկայություն:
- Մեծ ծավալով ջրի ամբարման հնավորություն /կառուցել 1500 մ երկարությամբ ջրագիծ՝ բնական ջրերի համայնք հասցնելու համար, ինչի արդյունքում համայնքի ողջ բնակչությունը կպահովվի ջրով:

1.15 Համայնքի թույլ կողմերը

- Ճանապարհների, խմելու ջրի ներհամայնքային համակարգերի անմխիթար վիճակ:
- Ծնելիության նվազում՝ կապված սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացման հետ:
- Գործազրկության բարձր մակարդակ և արտագաղթի ծավալի մեծացում:
- Մեխանիզացիայի բացակայության պատճառով գյուղացու եկամուտների նվազում:

1.16 Համայնքին սպառնացող վտանգներ

Համայնքի տարածքում մեծ թվով սողանքային գոտիների առկայություն:

2.1 Ռազմավարություն

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և ամենագեղեցիկ բնակավայրերի մեկը:

Առաջիկա չորս տարիներին համայնքի հիմնական նպատակներն են

- բնակչության խմելու ջրի մատակարարման բարելավում
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների վերանորոգում
- դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում
- մշակույթի տան, գրադարանի, գյուղապետարանի, փոստային բաժանմունքի և բուժկետի համալիր շենքի կառուցում
- մտուր-մանկապարտեզի կառուցում
- բնակչության կոմունալ-կենցաղային և սոցիալական պայմանների բարելավում
- հնարավորության սահմաններում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ծրագրերի իրականացում, համայնքի սեյսմիկ քարտեզի ստեղծում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 4 կմ, որից 2 կմ կենտրոնական ճանապարհ է: Սույն ծրագրով առաջարկվում է ասֆալտապատել գյուղի կենտրոնական ճանապարհը՝ 2 կմ երկարությամբ և բարեկարգել մյուս փողոցները: Անմխիթար վիճակում գտնվող ճանապարհների պատճառով ձմռան ամիսներին հանրավոր չի լինում թե՛ մարդատար թե՛ բեռնատար մեքենաների երթևեկությունը: Գյուղացիները չեն կարողանում կապ պահպանել այլ համայնքների հետ և իրացնել գյուղմթերքները, որի պատճառով էլ կրում են վնասներ: Չի գործում շտապ օգնությունը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակն է՝

- ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ՝ տարվա բոլոր եղանակներին.
- վերացնել փողոցային ջրափոսերը.

Ծրագրի խնդիրները՝

- համագործակցել որևէ դոնոր կազմակերպության հետ, ստանալ ֆինանսավորում պետական բյուջեից՝ կազմել ծրագրի իրականացման նախագա- նախահաշվային փաստաթղթերը.
- կատարել ավագի, խճաքարի և կավի խառնուրդի փոում համայնքի փողոցներում, ասֆալտապատել համայնքի ճանապարհը.

ԾՐԱԳԻՐ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԻ՝ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ, ԳՐԱԴԱՐԱՆԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ, ԲՈՒԺԿԵՏԻ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Համայնքի գյուղապետարանի շենք չունի: Ակումբի շենք կառուցվել է 1946 թ-ից և մինչև օրս ոչ մի անգամ վերանորոգում չի կատարվել: Շենքն ամբողջովին խարխլված է: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ նման վիճակում գտնվող շենքը չի կարող ծառայել իր նպատակին: Բանակչությունը չունի ժամանցի վայր: Չկա համապատասխան վայր, որտեղ կարող են անցկացվել հասարակական միջոցառումներ ու հավաքություններ:

Բուժկետը և փոստային բաժանմունքը գործում են տնակայնի պայմաններում: Հաշվի առնելով հիմնախնդիրների կարևորությունը համայնքի բնակչության համար՝ առաջարկվում է սույն ծրագրով կառուցել մշակույթի տան, գրադարանի, գյուղապետարանի, բուժկետի և փոստային բաժանմունքի համալիր շենք:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակն է՝

- աշխուժացնել համայնքի մշակույթային կյանքը
- մշակույթի տան դահլիճը տրամադրել միջոցառումների, ավագանու նիստերի, համայնքի ընդհանուր ժողովների անցկացման համար /դահլիճը նախատեսվում է 200 տեղանոց/.
- տոնական օրերին կազմակերպել մասսայական միջոցառումներ և երեկոյթներ.
- տրամադրել խաղասենյակ շախմատի, նարդու և այլ խաղերի համար.


Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

- ձեռք բերել համաձայնություն դոնոր կազմակերպության կամ պետական բյուջեի հետ՝ պահանջվող գումար հատկացնելու համար:
- կազմակերպել բարերարների կամ համայնքի կողմից ներդրումների հարցը
- կառուցել մշակույթի տան, գրադարանի, գյուղապետարանի, բուժկետի և փոստային բաժանմունքի համալիր շենքը.

Ծրագրից սպասվող արդյունքները

- Բնակչության ազատ ժամանակն ավելին հետաքրքիր և արդյունավետ անցակացնելը.
- Ապահովել անհաժեշտ պայմաներ բնակիչների կրթական և հոգևոր զարգացման համար.

Անտառամուտ համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածք



Անտառամուտ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկ

1. Ակումբի շենք
2. Կարտոֆիլի պահեստ
3. Հայրենական Մեծ Պատերազմի զոհերի հիշատակին կառուցված հուշաղբյուր կոթող
4. Ներհամայնքային ոռոգման համակարգ
5. Ներհամայնքային կամուրջներ-2 հատ
6. Գերեզմանատուն
7. Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ
8. Սիլոսի հոր
9. Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգ

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀՀ	Ցուցանիշներ	Չափի միավոր	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
1.	Համայնքի տարածք	հա	549	549	549	549
2.	Բնակչության թիվը	մարդ	326	230	230	230
3.	Ծնունդ	մարդ	4	4	4	4
4.	Մահաճություն	մարդ	3	1	1	1
5.	աշխ. ռեսուրսները, այդ թվում՝ զբաղվածները ըստ տնտես. ճյուղերի	մարդ	120	120	123	123
6.	Գործազրկության մակարդակ	%	80	80	80	80
7.	Առևտրի և սպասարկումների օբյեկտների թիվը	հատ	-	-	-	-
8.	Պահուստային հողեր	հա	45	45	45	45
9.	Պահուստային հողերի օգտագործման մակարդ.	%	50	50	50	50
10.	Խմելու ջրի ներհամայնքային համակարգի երկարություն	կմ	2.4	2.4	2.4	2.4
11.	Ներհամայնքային ռոտզման համակարգի երկարություն	կմ	10	10	10	10
12.	Ռոտզման համակարգի տակ գտնվող հողեր	հա	64	64	64	64
13.	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարություն	կմ	4	4	4	4
14.	Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարություն	կմ	3	3	3	3
15.	Բնակ ֆոնդ, այդ թվում <ul style="list-style-type: none"> • համայնքային • մասնավոր 	շենք /հազ.քմ/	11032	11032	11032	11032
16.	Բնակկարիքավորների թիվը	ընտ.	7	7	7	7
17.	Մեկ շնչին ընկնող ջրի սպառում	լ/օր	1400	1400	1400	1400
18.	Ջրի կորուստները ներհամայնքային համակարգում	%	15	15	15	15
19.	Սովորողների թիվը հանրակրթական դպրոցում	մարդ	29	30	30	30
20.	Երեխաների թիվը մանակապ-ում	մարդ	-	-	-	-
21.	Գյուղապետարանի և ենթակառուցվածքների աշխատողների թիվը	մարդ	6	6	6	6